ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 229

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնների վերաբերյալ

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի առաջին կարգի մասնագետ

(ծածկագիր՝ 3.2-405)

ա) բաժնի պետի հանձնարարությամբ վարչական շրջանի ղեկավարի տնօրինմանը հանձնված կրթական, մշակութային, մարզական և նախադպրոցական հիմնարկներում ուսումնասիրում է երեխաների առողջության պահպանումը և այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.
բ) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է սույն կետի ա ենթակետում նշված հիմնարկներում կազմակերպվող միջոցառումներին, մեթոդական օգնություն ցուցաբերում.
գ) բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է վարչական շրջանի տարածքում գտնվող պատմամշակույթային հուշարձանների պահպանության խնդիրը, ներկայացնում է առաջարկություններ.
դ) բաժնի պետի հանձնարարությամբ գրադարաններում ուսումնասիրում է գրքերի հաշվառման, պահպանման վիճակը, գրադարանային գործի ճիշտ կազմակերպումը և զեկուցագիր է ներկայացնում բաժնի պետին.
ե) բաժնի պետին է ներկայացնում ամառային արձակուրդներին դպրոցահասակ երեխաների հանգստի, ժամանցի, բակային ճամբարների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ.
զ) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
է) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
ը) հետևում է բաժնի պետի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է բաժնի պետին.
թ) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ։

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ ունի միջնակարգ կրթություն.
բ/ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին». «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի հուլիսի 15-ը ժամը 10:00: Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին: Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 011-563-187): ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: